9843

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 03 » 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0140-21

Ձեռնարկողը՝ ***«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ»***
ք.Երևան-0015, Արգիշտիի փող. 1

Գործունեությունը՝ ***Նոր Արեշի №71 մանկապարտեզի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք.Երևան, Նոր Արեշ 2 փողոց 45ա

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 014 0-21

<03> 08 2021թ.

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ»-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Արեշի № 71 մանկապարտեզի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ»
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Երևան քաղաք, Նոր Արեշ 2, փողոց 45ա

Ներածական մաս. Ելնելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է սույն օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:
ՀՀ Քաղաքաշինության պատվերով և տեխնիկական առաջադրանքի համաձայն, նախագիծը մշակվել է ըստ Երևանի քաղաքապետի կողմից 2018 թվականի մայիսի 18-ին տվրած №01/18-07/2-36359-278 նախագծային առաջադրանքի /ճարտարապետա-հատակագծային առաջադրանք/ պահանջների: Մանկապարտեզը նախագծվել ու կառուցվել է մինչև Սպիտակի 1988թ. երկրաշարժը, ուստի ակնհայտ է, որ նրա ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներում կան անհամապատասխանություններ ՀՀ ներկայումս գործող «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր ՀՀՇՆ II-6.02-2006» շիննորմերի պահանջներին: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նոր Արեշ վարչական շրջանում, կառուցապատված է տարբեր շինություններով և բնակելի տներով: Մանկապարտեզը կազմված է թվով 7 մասնաշենքերից, որոնք կապված են միմյանց հետ 3 տաքանցումներով: Բոլոր մասնաշենքերն երկու հարկանի են, 3.30մ հարկի բարձրությամբ, բացառությամբ 2-րդ և լողավազանի մասնաշենքերի, որոնք մեկ հարկանի են և ունեն համապատասխանաբար 3.30 և 3.60 հարկի բարձրություն: Բոլոր մասնաշենքերը ինչպես միմյանցից, այնպես էլ տաքանցումներից բաժանված են հակասեյսմիկ կարաններով:

Մանկապարտեզի ուսումնասիրությունները ցույց են տվել առկա բազմաթիվ խնդիրներ՝ շենքի կոյուղու և ջրագծերի ներքին ցանցերը գտնվում են անբավարար և մասամբ վթարային վիճակում, ինչի հետևանքով պարբերաբար տեղի է ունենում ջրերի արտահոսք դեպի նկուղային հարկ, ինչպես հիմքերը, այնպես էլ պատերի գետնախարսխային մասերը չունեն

ջրամեկուսիչ շերտ, ինչի հետևանքով գրունտում առկա խոնավությունը ներթափանցում է շենքի կոնստրուկտիվ տարրեր, նկուղային հարկը չունի բավարար օդափոխություն կամ այն վատ է կազմակերպված, ինչպես հիմքերը, այնպես էլ պատերի գետնախարսխային մասերը չունեն ջրամեկուսիչ շերտ, ինչի հետևանքով գրունտում առկա խոնավությունը ներթափանցում է շենքի կոնստրուկտիվ տարրեր կայլն: Այս ամենի հետ մեկտեղ առաջացել են նաև մի շարք էներգետիկ խնդիրներ:

Այս ամենից ելնելով տրվելու են հիմնանորոգման տեխնիկական և տեխնոլոգիական, ճարտարապետական հիմնական լուծումներ, ինժեներական նոր համակարգեր, ինչպես նաև էներգաարդյունավետության բարձրացում:

Նկարագրական մաս. Մանկապարտեզի անվտանգության նկատառումներից ելնելով, մասնաշենքերի սեյսմազինվածության մակարդակի ավելացման և բնականոն շահագործման համար նախագծով նախատեսված են մի շարք տեխնիկական լուծումները՝ բոլոր մասնաշենքերում նախագծում նշված հիմքերը ուժեղացվում են և միաձույլ երկաթբետոնե հեծաններով կապվում են միմիանց հետ, սյուները ուժեղացվում են և իրականացվում են միաձուլլ երկաթբետոնե դիաֆրագմաներ, բոլոր մասնաշենքերում շրջանակային կոշտ հանգույցներ ստանալու նպատակով ուժեղացվում են սյան և հեծանի՝ միացման հանգույցներ: Բոլոր ծածկերը ուժեղացվում են մանրախիճ ամրանավորված բետոնի ծածկաշերտով: Կոռոզիայի ենթարկված բացված ամրանները մաքրվում են և սվաղվում ցեմենտավազային շաղախով: Իրականացվում են հարթ տանիքի, արտաքին պատերի ջերմամեկուսիչ նոր շերտեր:

Աստիճանավանդակների տարածքում տեղադրվում են հակահրդեհային աստիճաններ, տեղադրվում են նոր բազրիքներ: Տարհանման սանդուղքները ապամոնտաժվում են, ուժեղացվում են և վերատեղավորվում են պատերի ջերմամեկուսացման շերտերը իրականացնելուց հետո:

Տեղադրվում են օդափոխության սարքեր, տանիքներում տեղադրվում են արևային ֆոտովոլտային և արևային ջրատաքացուցիչ սարքեր՝ մետաղականհենարանների վրա: Ինչպես նաև տեղադրվելու է հակահրդեհային և տեսահսկողության ազդանշանման համակարգեր:

Նախատեսվում է նաև պատուհանների տակի խորշերի ներքին մակերևույթին ջերմամեկուսիչ, արտացոլող էկրանների տեղադրում, արտաքին դռների, պատուհանների փոխարինում էներգաարդյունավետ (երկշերտ ապակեպատմամբ, 4 խցիկանի ՊՎՔ շրջանակներով, նկուղների առաստաղների ջերմամեկուսացում 100 մմ հաստության հանքային բամբակով (կամ XPS/EPS համարժեք այլ նյութով), տաքանցումների հատակներիջերմամեկուսացում փրփրապոլիուրեթան (PU, կամ համարժեք այլ նյութով) 90 մմ հաստության ջերմամեկուսիչ նյութով: Թվով 6 կոնդենսացիոն ջեռուցման կաթսաների տեղադրում: Ջեռուցման համակարգի ավտոմատ կառավարման և բալանսավորման համակարգի ներդրում, ջերմային ցանցի ջերմամեկուսացում:

Ձևավորվում են նոր խաղասենյակներ, ննջարաններ, սանհանգույցներ, ընդարձակ ռեկրեացիաներ, նոր աշխատասենյակներ և նոր խոհանոց, լվացքատուն առկա լողավազանի տարածքում: Վերակառուցվում և կառուցվում են արտաքին աստիճանները, հարթակները և թեքահարթակները:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Մանկապարտեզի հիմնանորոգման ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, երկաթբետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ այլն: Վերը նշվածից ելնելով մանկապարտեզի նախատեսվող հիմնանորոգման իրականցման ժամանակ հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա, որը սակայն կկրի ժամանակվոր բնույթ, հաշվի առնելով աշխատանքների բնույթը և ծավալները: Իսկ հնարավոր ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինի շինարարական աշխատանքներով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը շինարարության փուլում հիմնականում պայմանավորված են արտանետումներով: Կանխատեսվում է օդի աղտոտում՝ շինությունների ու կոնստրուկցիաների քանդման ընթացքում, պայմանավորված քանդման և հողային աշխատանքների ժամանակ անօրգանական փոշու առաջացում: Տեխնիկական միջոցների շահագործման ժամանակ վառելիքի այրումից ՝ մրի, ծծմբի և ազոտի երկօքսիդների ու ածխածնի օքսիդի արտանետումներ: Նշված արտանետումները կլինեն տեղայնացված և ժամանակավոր, ենթակա արագ ցրման՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը:

Մանկապարտեզի տարածքում կան մի քանի փոքր հողակտորներ՝ ազատ հողատարածքով, որոնց վարա կտեղադրվեն երեք հատ ժամանակավոր տնակներ, որոնք կապամոնտաժվեն և դուրս կբերվեն մանկապարտեզի տարածքից աշխատանքներից հետո: **S**տարածքում կան կանաչ գոտիներ և գոտիներով անցնում են ջրամատակարարման և կոյուղու խողովակներ, որոնց վերանորոգման/փոխարինման աշխատանքների ժամանակ կարիք կլինի հանել արտաքին հողածածկը, որի արդյունքում մասնակիորեն կվնասվի բերրի հողաշերտը: Կարիք կլինի նաև հանել արտաքին հողի շերտ՝ ջրամատակարարման և կոյուղու խողովակների վերանորոգման/փոխարինման աշխատանքների ժամանակ, որի արդյունքում կվնասվի այդ հատվածի խոտածածկը և կհատվեն 3 – 4 թուփ:

Ներկայացված արտանետումների պահումը թույլատրված նորմերի սահմաններում և հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում: Մասնավորապես շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում կիրականացվի ջրցան, սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը կծածկվեն համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու համար: Պարբերաբար կստուգվի շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և կիրականացվի կարգաբերում: Գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն կիրականացվի ծածկված թափքերով բեռնատարներով, այդ թվում հնարավորինս չի օգագործվի անորակ վառելիք:

Մանկապարտեզի հիմնանորոգման ընթացքում կառաջանա շինարարական աղբ՝ գոյություն ունեցող շինությունների և կոնստրուկցիաների քանդման արդյունքում, որի ծավալը ըստ նախագծային փաստաթղթերի կանխատեսվում ՝ 1121.5 մ^3, որը կտեղափոխվի Սիլիկյան թաղամասի հատուկ աղբավայր, նախապես ստանալով Երևանի քաղաքապետարանի թույլտվությունը:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին, տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների պարբերաբար ստուգում և

կարգի բերում, հնարավորինս կխուսափվի աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից անհրաժեշտության դեպքում կտեղադրվի խլացուցիչներ, հնարավորության դեպքում կսահմանափակվի միաժամանակ ծանր տեղնիկայի /բուլդոզեր, էքսկավատոր/ շահագործումից:

Կկատարվի կոյուղու և ջրագծի վերակառուցման աշխատանքների ժամանակ հանված բուսահողի պահպանություն և հնարավոր կարճ ժամկետում նույն հատվածում փռում, հնարավոր կլինի տարածքում առկա 25 - 30 ծառերի պահպանումը, մնացածը հնարավորության դեպքում կտեղափոխի մոտակա կանաչ տարածք վերատնկելու համար, որը կկազմակերպվի համապատասխան մասնագետի հետ համաձայնեցված, հնարավորինս կբացառվի շինարարական աղբի և հողերի կուտակումները, պահեստավորումը բուսածածկ տարածքներում:

Մոտակա բնակչությանը կիրազեկվի շինարարական աշխատանքների վերաբերյալ, որոնց արդյունքում կարող են ավելանալ փոշու քանակները, աղմուկի մակարդակը և ինչպես նաև կիրազեկվեն ժամանակավորապես փակվող ճանապարհների մասին: Կտեղադրվեն ցուցանակներ, կնախատեսվեն ժամանակավոր անցումների, որպես այլընտրանքային ճանապարհներ:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երեբունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Առողջապահության», «Արտակարգ իրավիճակների», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի», նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Մանկապարտեզի շենքի սեյսմազինվածության բարձրացման և հիմնանորոգման շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Պարսպապատել շինարարական հրապարակը, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
4. Հողային զանգվածի ջրցան անհրաժեշտության դեպքում ետլիցք և պարտադիր ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով:
5. Մինչ շինարարական աշխատանքները սկսելը ստանալ գրավոր համաձայնեցում Երևանի քաղաքպետարանի կողմից հնարավոր ծառերի, թփերի հատման և վերատնկման վերաբերյալ:
6. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
7. Կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» կողմից ներկայացված, Երևան քաղաքի Նոր Արեշ 2 փողոցի 45ա հասցեում գտնվող №71 մանկապարտեզի շենքի սեյսմազինվածության բարձրացման և հիմնանորոգման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Ն.Նասիբյան

Ընդամենը՝ 5 էջ